



ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ-ԶԵՎԱԶԱՓ

ՄԱՍ 1

Լրացվել է՝ հիմք ընդունելով Ծրագրի նպատակը, խնդիրները՝ օգտվելով համապատասխան լիազոր մարմինների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի նախարարությունների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներից, Լոռու մարզպետարանի և համայնքի կայքերից, Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) տվյալներից, Տարածքային զարգացման հիմնադրամի կայքից, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից փոքր ՀԷԿ-երի և հանքարդյունաբերական ընկերությունների ոլորտներում կատարված ուսումնասիրությունների տվյալների բազայից, պաշտոնական այլ փաստաթղթերից և ստորագրված պայմանագրերից:

Ընդհանուր տվյալներ համայնքի մասին

Մարզ - Լոռի

Համայնք-Օձուն

Համայնքի ղեկավար—Արսեն Տիտանյան, հեռախոս (+374 77) 70-70-38, համայնքի էլեկտրոնային կայք www.odzun.am

Համայնքի ավագանին ընտրվել է 2017 թվականի նոյեմբերի 5-ին, կազմված է 11 անձից, որոնք են՝

- 1.Աղվանյան Տելեմակ, 2.Ապրեսյան Արսեն, 3.Ասրյան Սամվել, 4.Դանիելյան Մհեր, 5.Դավթյան Արարատ, 6.Թորոսյան Գագիկ, 7.Խեչումյան Մհեր, 8.Ղարիբյան Արսեն
- 9.Մոսիսյան Աղաբեկ, 10.Վարդանյան Նվեր, 11. Տիտանյան Աբել:

Օձուն համայնքն ընդգրկում է Օձուն, Ամոջ, Այգեհատ, Արդվի, Արևածագ, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Հազվի, Մղարթ բնակավայրերը:

Համայնքի սոցիալական, տարիքային, գենդերային պրոֆիլ

Համայնքի բնակչության ընդհանուր թիվը և սեռատարիքային կազմն ըստ <http://odzun.am/Pages/Registry/Demographic/DemographicMain.aspx> կայքի՝ 2021թ. հունիս ամսվա դրությամբ 7827 անձ, որից արական՝ 3923, իգական՝ 3904: 0-7 տարեկաններ՝ 471, 8-17 տարեկաններ՝ 797, 18-63 տարեկաններ՝ 5325, 63 և ավելի տարեկաններ՝ 1234: տարեկան: Ըստ նույն կայքի՝ տնային տնտեսությունների թիվը կազմում է 2148:

Ըստ Օձունի 2018-2022 զարգացման ծրագրի՝ համայնքի նպաստառու ընտանիքների թիվը՝ 223, գործազուրկների թիվը՝ 1953 հոգի: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունը և հողագործությունն է:

«Մուլտի գրուպ կոնցեռն» ՍՊ ընկերությունում զբաղված 141 աշխատողից 8-ն են Լոռու մարզից:

Համայնքի բնակավայրերի գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը

Ըստ Օձուն խոշորացված համայնքի 2018-2022թթ. զարգացման ծրագրի՝ Օձունի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմել են 9323 հա, որից Օձուն՝ 5404 հա, Մղարթ՝ 883.78 հա, Այգեհատ՝ 373 հա, սեփականաշնորհված հողեր՝ 282 հա, Արևածագ՝ 365 հա՝ ըստ Լոռու մարզպետարանի կայքի: Արդվիի, Ծաթր, Հազվի և Կարմիր Աղեկի գյուղերի գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ տվյալներ չկան ոչ զարգացման ծրագրում, որ համայնքի անձնագրում, ոչ մարզպետարանի կայքում: http://www.odzun.am/upload/DocFlow/Projects/Fr186151730467114_2018-2022_HNGAMYA_ZARGACNAMCRAGIR.pdf

Համայնքի էներգետիկ և ընդերքօգտագործման նշանակության հողերի մակերեսն՝ ըստ բնակավայրերի

Մղարթ՝ էներգետիկ նշանակության՝ 0,01 հա, ընդերքօգտագործման նշանակության՝ 40.09 հա: Օձունի, Այգեհատի, Արևածագի, Ծաթերի, Կարմիր Աղեկի, Հազվիի, Կարմիր Աղեկի վերաբերյալ տվյալներ չկան:

Համայնքի էներգետիկ և ընդերքօգտագործման նշանակության հողերի վարձակալության դիմաց ստացված տեղական բյուջեի մուտքերը

«Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ն հողերի վարձակալության համար Օձուն համայնքին 2017-2018-2019թթ. վճարել է 2489589-ական դրամ՝ ըստ ԱՃԹՆ կայքում Ընկերության հաշվետվության: 2019թ-ին՝ 2166 դրամ: Գերավճարի կամ ապառքի մնացորդը հաշվետու տարվա վերջի դրությամբ՝ 1083 դրամ: 2018թ. «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ն Օձուն խոշորացված համայնքի բյուջեին կատարել է 17060 դրամ, 2019թ.՝ 8530,0 դրամ գույքահարկի վճարում:

Համայնքի վարչական տարածքում մետաղական հանքավայրեր շահագործող կամ վերամշակող կազմակերպություններ (կազմակերպություն, արդյունահանվող կամ վերամշակվող հանքաքար)

1. «Մուլտի Գրուպ Կոնցեռ» ՍՊԸ, տիպատեսակ է Մղարթի ոսկու հանքավայրի թիվ 5 և թիվ 8 հանքային մարմինների ընդերքօգտագործման իրավունքը:

Համայնքի վարչական տարածքում ոչ-մետաղական հանքավայրեր շահագործող կազմակերպություններ (կազմակերպություն, արդյունահանվող կամ վերամշակվող հանքաքար)

1. Օձուն համայնքում գործում է 5 քարի արտադրամաս:

2. «Էջ ընդ էռ ֆելզիտ» ՍՊԸ, Ծաթեր-Կաչագանի ֆելզիտային տուֆեր, ընդերքօգտագործման պայմանագիր՝ ՊՎ-377 (18.12.12թ.) պայմանագրում ազդակիր համայնքի նկատմամբ սոցիալական պարտավորություններ ներառված չեն:

Համայնքի վարչական տարածքում շահագործվող ՀԷԿ/ ՓՀԷԿ-եր՝
չկան

Համայնքի սոցիալական և բնապահպանական բացահայտված խնդիրներն՝ ըստ համայնքի անձնագրի և սոցիալ-տնտեսական զարգացման վերջին գործող ծրագրի

- **Աղքատության ցուցանիշը**

Օձունում գրանցված է 1953 գործազուրկ: «Փարոս» ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ՝ 229՝ ըստ 2018-2022թթ. Օձունի զարգացման ծրագրի: Ծաթերում բնակչության կենսամակարդակը ցածր է: Լոռու մարզում աղքատության ցուցանիշը 25 տոկոս է:

- **Բնակչության զբաղվածության ցուցանիշը**

Օձունում հաշվառված բնակիչներից զբաղված են 3408 հոգին՝ ըստ 2018-2022թթ. Օձունի զարգացման ծրագրի:

- **Ոռոգման և խմելու ջրերի հասանելիությունը**

Խմելու ջուր ունեցող տներինը՝ 70%, ընդհանուր հողատեսքերի 60%-ը չի ոռոգվում՝ ըստ 2018-2022թթ. Օձունի զարգացման ծրագրի: Հազվի գյուղի հողատարածքներն ամբողջովին զրկված են ոռոգման ջրից, որի պատճառով հնարավոր չէ լիարժեք կազմակերպել գյուղմթերքների արտադրություն: Մղարթում առկա է խմելու ջրի խնդիր: Խմելու ջրի ներհամայնքային ցանցի բացակայություն: Ըստ Օձունի զարգացման 2018-2022թթ. ծրագրի՝ համայնքի ուժեղ կողմերից է ոռոգման ցանցի առկայությունը, թույլ կողմերից է ոռոգման ներքին ցանցի վերանորոգման անհրաժեշտությունը, խմելու ջրագծերի կառուցման անհրաժեշտությունը /Հազվի, Արդվի, Մղարթ/ բնակավայրեր:

Ըստ Մղարթի վարչական ներկայացուցիչ Ավագ Մովսիսյանի «Մուլտի գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ն 2018թ-ի հանրային լսման ժամանակ խոստացած գյուղի խմելու ջրի խնդիրը չի լուծել: «Աղբյուրները, քանի գնաց, ցամաքեցին: Հիմա եկել է մի պահ, որ չեն հերիքում բնական աղբյուրները, որ համ կովերը խմեն, համ մարդիկ օգտվեն, լվացքի մեքենա օգտագործեն: Հարևան Կողեսից ենք ջուր բերում մեքենաներով»: ԷկոԼուրի հետ հանդիպման շամանակ Մղարթի բնակիչները կարծիք հայտնեցին, որ աղբյուրների սակավաջուր դառնալը հանքի պայթեցումների հետևանք է: «Ընդերքի պայթեցումներն ազդել են սարից եկող ջրերի վրա: Գյուղում ջուր չկա. հողի շարժվելու ընթացքում

հավաքված ջրերը կորել են»: <https://www.ecolur.org/files/uploads/mghartreportfinal.pdf>,
<https://www.ecolur.org/hy/news/mining/12676/>

Համայնքի ուժեղ և թույլ կողմերն ըստ համայնքի զարգացման գործող ծրագրի՝
Համայնքի ուժեղ կողմերն են՝ մարդկային ներուժի, ենթակառուցվածքների
հանգստյան տան, հյուրատների, պատմամշակութային հուշարձանների, ոռոգման
ցանցի, կապի միջոցների և տեղեկատվության, բուժամբուլատորիաների
առկայությունները:

Համայնքի թույլ կողմերն են՝ ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը,
ոռոգման ցանցի վերանորոգման անհրաժեշտությունը, խմելու ջրագծերի կառուցման
անհրաժեշտությունը/Հազվի, Արդվի, Մղարթ բնակավայրեր/, գյուղատնտեսական
տեխնիկայի, վերամշակող արտադրամասերի, կոյուղագծերի միասնական կոլեկտորի
բացակայությունները

Համայնքի առողջապահական սպասարկման հաստատությունների առկայությունը

Օձունում առկա է բուժամբուլատորիա: Մղարթում առկա է 1 բուժկետ, որը հազեցած
չէ անհրաժեշտ բուժսարքավորումներով: Ունի 1 բուժքույր: Մղարթին սպասարկում է
Արևածագ համայնքի բժշկական հաստատությունը: Ծաթերում առկա է բուժկետ իր
բոլոր հարմարություններով՝ ապահովված առաջին բուժօգնության պարագաներով և
խմելու ջրի ջրամատակարարմամբ: Աշխատում է 1 բուժքույր: Այգեհովիտում,
Արդվիիում և Հազվիիում առկա են բուժկետեր:

Կրթության հասանելիություն (նախադպրոցական, դպրոցական, արհեստագործական, բարձրագույն ուսումնական հաստատություններ)

Օձուն գյուղում կա երկու դպրոց, երկու մանկապարտեզ, մշակույթի տուն, արվեստի
դպրոց, փոստ: Մղարթում գործում է 1 դպրոց, որն ունի 38 աշակերտ, 18 աշխատող:
Մղարթն ունի կեսօրյա մանկապարտեզ, ուր հաճախում է 14 սան: Ծաթերն ունի 1
հիմնական դպրոց: Ծաթերում չկա գործող նախադպրոցական կրթական
հաստատություն: Արդվիում կա հիմնական դպրոց՝ 14 աշակերտով: Արևածագ գյուղն
ունի միջնակարգ դպրոց և նախակրթարան: Հազվի գյուղն ունի մեկ հիմնական դպրոց:

Համայնքի տարածքում արտադրական թափոնների և հանքարդյունաբերական լցակույտերի առկայությունը՝

Մղարթի տարածքում է գտնվում Մղարթի ոսկու հանքի պոչամբարը, որի
նախագծային ծավալը 0,1 միլիոն խմ է, փաստացի ծավալը՝ 0,08 միլիոն խմ՝ ըստ 2016թ-
ին Համաշխարհային բանկի պատվերով հրապարակված «Հանքարդյունաբերության
ոլորտի կայունության ռազմավարական գնահատում. Հայաստան» աշխատության:

Օձուն համայնքի Հազվի գյուղից մոտ 1,4կմ հյուսիս-արևմուտք գտնվում են
ընդերքօգտագործման թափոնների լցակույտեր, որոնք առաջացել են Հազվիի պղնձի
հանքավայրում մակերեսային և ստորգետնյա լեռնային փորվածքների անցման
արդյունքում: Տարածքում կուտակված ընդերքօգտագործման թափոնները
դիտարկվում են որպես սիրազուրկ/լքված [http://www.mnp.am/shrjaka-
mijavayr/ynderqi-hashvetvutyunner](http://www.mnp.am/shrjaka-mijavayr/ynderqi-hashvetvutyunner):

2020թ-ի դրությամբ համայնքի բնապահպանական բնութագիրն՝ ըստ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի

(<http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Annual-2020.pdf>), պաշտոնական և ոչ պաշտոնական այլ աղբյուրների

Ըստ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2020 թվականին տրամադրված տեղեկությունների՝ «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊ ընկերությունը 2011 թվականից ի վեր հանքը շահագործել է առանց ջրօգտագործման թույլտվության, հանքավայրի տարածքում առկա շինությունները կառուցվել են առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության, խախտվել է սահմանային թույլատրելի արտանետումների պահանջները: (<https://www.ecolur.org/hy/news/mining/12727/>)

- **Համայնքի մթնոլորտային օդի որակը**

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը մթնոլորտային օդի որակի վերահսկման մոնիտորինգ չի իրականացնում և մթնոլորտային օդի որակի նմուշառման դիտակետեր չունի համայնքի տարածքում:

- **Համայնքի տարածքով հոսող գետերի աղտոտվածության մակարդակը՝**

Տվյալները բացակայում են:

- **Հողերի աղտոտվածության մակարդակը՝**

«Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում 2020թ-ի դրությամբ հողերի աղտոտվածության մակարդակի մասին տվյալները բացակայում են (<http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Annual-2020.pdf>), մինչդեռ 2020թ. Մղարթ ազդակիր բնակավայրում «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի անցկացրած ուսումնասիրության արդյունքում հարցվածների 40% պատասխանել է, որ արոտավայրերի կրճատման և աղտոտվածության պատճառով քչացրել են իրենց անասունների գլխաքանակը, ինչի արդյունքում կրճատվել են իրենց եկամուտները, և որ չեն կարողանում հոգալ իրենց կարիքները (<https://www.ecolur.org/files/uploads/mghartreportfinal.pdf>):

Անտառապատվածություն - Մղարթ՝ 155,61 հա անտառային հողեր: Օձուն՝ անտառներ՝ 1893 հա: Ծաթերի մասին տվյալներ չկան:

Համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի վերաբերյալ

Օձուն համայնքի տարեկան բյուջեն 2020թ-ի համար կազմել է 301066.8 հազ. դրամ, որից սեփական եկամուտները՝ 76269.5 հազ. դրամ, պետական բյուջեից համայնքին տրամադրվող դոտացիաները՝ 168397.1 հազ. դրամ, կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ ստացված կառավարման այլ մակարդակներից՝ 55000,0 հազ. դրամ: Հողի վարձակալության վճար՝ 8500,0 հազ. դրամ:

Համայնքի 2021թվականի տարեկան բյուջեի վերաբերյալ

Օձուն համայնքի տարեկան բյուջեն 2021թ-ի համար կազմել է 371173,4 հազ. դրամ, որից սեփական եկամուտները՝ 76332,1 հազ. դրամ, պետական բյուջեից համայնքին տրամադրվող դոտացիաները՝ 215781,1 հազ. դրամ, կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ ստացված կառավարման այլ մակարդակներից՝ 79060,0 հազ. դրամ, հողի վարձակալության վճար՝ 7500,0 հազ. դրամ:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքին համապատասխան ընկերությունների կողմից տրված հարկերի հաշվին իրագործվող ծրագրեր

Ըստ ՊԵԿ-ի, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն, 2017թ-ին Օձուն համայնքին բնապահպանական ծրագրերի համար տրվել են հետևյալ սուբվենցիաները.

1. Օձուն բնակավայրի բնական միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր, բյուջե՝ 19806,2 հազար դրամ
2. Հազվի գյուղի բնապահպանական ծրագիր, բյուջե՝ 30051,1 հազար դրամ
3. Աքորի գյուղի բնապահպանական ծրագիր, բյուջե՝ 24903,2 հազար դրամ

Օձուն համայնքին բնապահպանական ծրագրերի համար 2018թ. տրվել են հետևյալ սուբվենցիաները.

1. Աքորի գյուղի բնապահպանական ծրագիր, բյուջե՝ 1372,6 հազար դրամ

2019թ-ին Օձուն համայնքին բնապահպանական ծրագրերի համար տրվել են հետևյալ սուբվենցիաները.

1. Օձուն և Հազվի բնակավայրերի բնական միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր, բյուջե՝ 22076,80 հազար դրամ
2. Օձուն բնակավայրի բնական միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր, բյուջե 6393,6 հազար դրամ

Համայնքի վարչական տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպությունների ընդերքօգտագործման պայմանագրերով ազդակիր համայնքի/բնակավայրի նկատմամբ ստանձնած սոցիալ-տնտեսական օժանդակություն չափը 0 է, քանի որ «Մուլտի Գրուպ Կոնցեռ» ՍՊԸ-ն 20.12.2012թ., ՊՎ-213 և «Էջ ընդ էո ֆելզիտ» ՍՊԸ, Ծաթեր-Կաչագանի ֆելզիտային տուֆեր, ՊՎ-377 (18.12.12թ.) ընդերքօգտագործման պայմանագրերով չունեն ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ:

Ազդակիր համայնքներում գործող բիզնեսի և համապատասխան համայնքի միջև կնքված կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (այսինքն՝ գրավոր կամ

բանավոր պայմանավորվածություն, որը բխում է ընկերության վարած սոցիալական քաղաքականությունից) շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

Ըստ Մդարթի վարչական ներկայացուցչի՝ որպես Մդարթի համար սոցիալական ծրագիր «Մուլտի Գրուպ Կոնցեռ» ՍՊԸ-ն 2019թ-ին Մդարթի հանդիսությունների սրահի վերանորոգման համար 2 միլիոն դրամ գումար է հատկացրել, 1 միլիոն դրամ էլ տրամադրել է 2008թ-ին Մդարթի դպրոցի գազաֆիկացման և վառարանների համար: Ըստ «Մուլտի Գրուպ Կոնցեռ» ՍՊԸ-ի՝ բացի ֆինանսական օժանդակությունը ցուցաբերել է նաև ոչ ֆինանսական օժանդակություն. ամեն տարի սելավներից և հեղեղումներից հետո նորոգվել և բարեկարգվել են գյուղամիջյան ճանապարհները, մաքրվել են «Ելկուտ» կոչվող անտառից գյուղ մտնող բոլոր աղբյուրների ակունքները, կառուցվել են նոր կապտաժային դիտահորեր: Գյուղին խմելու ջրով ապահովելու նպատակով նույն տեղամասում հորատվել է 50 մետր խորությամբ հորատանցք, որն ունի ջրի ցածր դեբիտ (<https://www.ecolur.org/files/uploads/mghartreportfinal>):

2019 թվականին Օձուն համայնքում իրականացված սուբվենցիոն ծագրեր

1. Համայնքի բնակավայրերի հրապարակների (խաղահրապարակների, հրապարակների-պուրակների) կառուցման-վերակառուցման աշխատանքներ, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 33 600 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 13 440 000 դրամ:
2. Համայնքի բնակավայրերի փողոցների վերանորոգում և ասֆալտապատում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 64 650 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 35 557 500 դրամ:
3. Համայնքում ոռոգման համակարգի կառուցում, ծրագրի ընդհանուր արժեքը՝ 34 778 700 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 22 606 200 դրամ:

2020 թվականին Օձուն համայնքում իրականացված սուբվենցիոն ծրագրերն են՝

1. Մդարթ բնակավայրի համայնքային դահլիճի վերանորոգում, ընդհանուր արժեքը՝ 5981144 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 2656458 դրամ
2. Օձուն բնակավայրի համայնքային դահլիճի նորոգում, ընդհանուր արժեքը՝ 8 339 709 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 3 713 900 դրամ
3. Համայնքի բնակավայրերի փողոցների վերանորոգում և ասֆալտապատում, ընդհանուր արժեքը՝ 52 572 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 30 437 361 դրամ
4. Համայնքի բնակավայրերում լուսավորության համակարգերի կառուցում, ընդհանուր արժեքը՝ 18 948 000 դրամ, ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում՝ 12 310 800 դրամ

2021թ. թվականին հաստատված սուբվենսիոն ծրագրերն են

1. «Օձուն համայնքի Օձուն բնակավայրի փողոցի նորոգում ասֆալտապատմամբ», ծրագրի ընդհանուր արժեքը՝ 47084580,0 դրամ, համայնքի ներդրումը՝ 30604977,0 րամ, պետական ներդրումը՝ 16479603,0 դրամ:
- 2.«Օձուն համայնքի Այգեհատ բնակավայրի փողոցների նորոգում սալարկմամբ», ծրագրի ընդհանուր արժեքը՝ 16489250 դրամ, համայնքի ներդրումը՝ 6595700 դրամ, պետական ներդրումը՝ 9893550,0 դրամ:

3, «Օձուն համայնքի բնակավայրերում լուսավորության համակարգերի կառուցում», ծրագրի ընդհանուր արժեքը՝ 12444050,0 դրամ, համայնքի ներդրումը՝ 5599822,0 դրամ, պետական ներդրումը՝ 6844228,0 դրամ:

4. «Օձուն համայնքի Օձուն բնակավայրում մարզաառողջարանային կենտրոնի կառուցում», ծրագրի ընդհանուր արժեքը՝ 120803860,0 դրամ, համայնքի ներդրումը՝ 72482316,0 դրամ, պետական ներդրումը՝ 48321544,0 դրամ:

Համայնքային զարգացման ծրագրերում «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի ներգրավվածությունը

ՀՀ Լոռու մարզի Մղարթ համայնքի (մինչև համայնքային խոշորացումը) 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրում անդրադարձ չկա «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից Մղարթի ոսկու հանքի շահագործման, համայնքում Ընկերության կողմից որևէ ներդրման, կամ հանքի շահագործման դեպքում համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման մասին: Պարզապես նշված է, որ համայնքում առկա է ոսկու հանքավայր: Համայնքն ունի 40,09 հա ընդերքօգտագործման նշանակության հող: Իսկ Ծրագրի «Շրջակա միջավայրի պահպանություն» բաժնում նշված է. «Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով: Ամսվա մեջ 4 անգամ կատարվում են աղբահեռացման աշխատանքներ»: Ծրագրում որևէ անդրադարձ չկա շրջակա միջավայրի վրա Մղարթի բացահանքի ազդեցության մասին և հանքի տարածքից շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման կամ մշտադիտարկումների մասին:

2020 թվականին համայնքապետարանի կողմից մարզպետարան ներկայացված սուբվենցիոն ծրագրերի նախնական հայտերի ցանկը

1. Օձուն համայնքի բնակավայրերի փողոցների վերանորոգում և ասֆալտապատում, բյուջեն՝ 55.97 մլն. դրամ, համայնքի ներդրում՝ 25.19 մլն. դրամ, այլ ներդնող՝ 0 դրամ, պետական բյուջեն՝ 30.78 մլն. դրամ
2. Համայնքի բնակավայրերում լուսավորության համակարգերի կառուցում՝ ընդհանուր բյուջեն՝ 27.37 մլն. դրամ, համայնքի ներդրում՝ 10.95 մլն. դրամ, այլ ներդնող՝ 0 դրամ, պետական ներդրում՝ 16.42 մլն. դրամ
3. Մղարթ բնակավայրի համայնքային դահլիճի վերանորոգում, ընդհանուր բյուջեն՝ 9.75 մլն. դրամ, համայնքի ներդրում՝ 5.85 մլն. դրամ, այլ ներդնող՝ 0 մլն. դրամ, պետական ներդրում՝ 3.9 մլն. դրամ:
4. Օձուն բնակավայրի համայնքային դահլիճի նորոգում, ընդհանուր բյուջեն՝ 11.72 մլն. դրամ, համայնքի ներդրում՝ 7.03 մլն. դրամ, այլ ներդնող՝ 0 դրամ, պետական ներդրում՝ 4.69 մլն. դրամ:

Ըստ համայնքի տարածքում մետաղական հանքավայր շահագործող «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊԸ-ի՝ ՀՀ ԱՃԹՆ 2018թ. և 2019թ. հաշվետվությունների՝ համայնքին առնչվող ցուցանիշները՝

2018թ.

Համայնքին ընկերությունը վճարել է 17060 դրամ գույքահարկ:
2166 դրամ հողի հարկ, 2489589 դրամ հողամասի վարձակալության վճար:

Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարած բարեգործական հատկացումներ՝ 0 դրամ:

Նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ՝ 0 դրամ:

Համայնքից ընկերությունում աշխատող մարդկանց թիվը՝ 137, որից 25-ը Լոռու մարզից: Տվյալ տարում արտադրանքի իրացումից պետական բյուջե վճարված ռոյալթիի մեծությունը՝ դրամ 12460936 (2017 թ . պարտավորությունների մարման գումարն է):

Բնօգտագործման դիմաց վճարված հարկի չափը՝ 0 դրամ:

Վճարված բնապահպանական հարկերի չափը՝ 0 դրամ:

2019թ.

Համայնքին ընկերությունը վճարել է 17060 դրամ գույքահարկ:

2166 դրամ հողի հարկ,

2489588 դրամ՝ հողամասի վարձակալության վճար:

Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարած բարեգործական հատկացումներ՝ 0 դրամ:

Նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ՝ 0 դրամ:

Համայնքից ընկերությունում աշխատող մարդկանց թիվը՝ 8 մարդ Լոռու մարզում:

Տվյալ տարում արտադրանքի իրացումից պետական բյուջե վճարված ռոյալթիի մեծությունը՝ 0 դրամ:

Բնօգտագործման դիմաց վճարված հարկի չափը՝ 0 դրամ:

Վճարված բնապահպանական հարկերի չափը՝ 0 դրամ: